ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

1953 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 2 փետրվարի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Գ. Ղարիբջանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1953 թվականի մարտի 31-ին Նյու Յորքում ստորագրված՝ Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Կոնվենցիան ստորագրվել է 1953 թվականի մարտի 31-ին՝ Նյու Յորքում և ուժի մեջ մտել 1954 թվականի հուլիսի 7-ին: Կոնվենցիային միանալու նպատակը կանանց վիճակի բարելավման և հասարակությունում նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի իրականացումն է:

2. Կոնվենցիան բաց է ՄԱԿ-ի անդամ և հրավիրված ցանկացած պետության համար:

Կոնվենցիան վավերացնող պետության համար այն ուժի մեջ է մտնում վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվան հաջորդող իններորդ օրը:

3. Կոնվենցիայի գործողությունը դադարում է այն օրվանից, երբ Կողմերի քանակը պակասում է վեցից:

Կողմերի միջև վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով, իսկ հակառակ դեպքում հանձնվում են Միջազգային դատարանի քննությանը:

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

ա/ իրականացնել կանանց և տղամարդկանց հավասար հիմունքներով բոլոր ընտրություններում քվեարկելու իրավունքը,

բ/ կանանց համար ստեղծել պայմաններ ընտրվելու բոլոր հանրորեն ընտրովի մարմիններում՝ ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով,

գ/ հնարավորություն տալ կանանց զբաղեցնելու պետական պաշտոններ և կատարելու օրենսդրությամբ սահմանված պետական գործառույթներ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62, 64 և 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 1953 թվականի մարտի 31-ին Նյու Յորքում ստորագրված՝ Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2 փետրվարի 2007 թվականի
ՍԴՈ-675